

Կ Ա Ր Ծ Ի Ք

Նարինե Ռաֆիկի Մատինյանի «Ուսուցչի մասնագիտական ռեֆլեքսիվ հմտությունների զարգացման ուղիները շարունակական կրթության համատեքստում» խորագրով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված ԺԳ. 00.01. «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Կյանքի բոլոր ոլորտներում, այդ թվում կրթության բնագավառում համակարգային փոփոխություններն ու տեղաշարժերը թելադրում են ուսուցչի մասնագիտական կայացման գործընթացի տեսության և պրակտիկայի զարգացման գերակա ուղղությունների նախանշման, հոգեբանամանկավարժական, տեխնոլոգիական և կենսասոցիալական տեսանկյունների վերանայման անհրաժեշտություն: Քննարկվող ատենախոսությունն իր հարցադրումներով արդիական է և ուրույն ձևով է լուծում ոլորտում առկա սոցիալ-մշակութային կարևոր հիմնախնդիր, որը դիտարկվում է մանկավարժական գործունեության առանցքային շեշտադրումների շրջանակներում: Ուսուցչի մասնագիտական ռեֆլեքսիվ հմտությունների զարգացումը քննության է առնվում առհասարակ 21-րդ դարի ուսուցչին ներկայացվող ընդհանրական պահանջների լայն համատեքստում՝ ըստ ժամանակակից աշխարհում իրականացող նորարարական գործընթացների ու դրանցից բխող կրթության բարեփոխումների բնույթի:

Գրախոսվող ատենախոսության գիտատեսական և կիրառական արժեքը պայմանավորված է ուսուցչի մասնագիտական գործունեության մանկավարժահոգեբանական, սոցիալ-մշակութային, արժեքանական, անդրագոգիկ կողմերի հետազոտմամբ և այդ գործընթացի կատարելագործման գործնական մոտեցումների նախանշմամբ:

Աշխատանքը գրված է գիտական ճիշտ մեթոդաբանությամբ, կառուցվածքային ու բովանդակային ամբողջականություն է, որում զուգորդվել են հետազոտության հիմնախնդրի գիտամեթոդական կողմերը: Հետազոտության բաղադրիչները՝ նպատակը, առաջադրված խնդիրները, գիտագործնական նշանակությունը, պաշտպանությանը ներկայացվող դրույթներն ու եզրակացություններն իմաստային համապատասխանությամբ արտահայտում են ատենախոսության տրամաբանությունը:

Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, ձևակերպված են հետազոտության նպատակը, օբյեկտը, առարկան, խնդիրները, վարկածը, ներկայացված է մեթոդաբանական հիմքը, սահմանված են գիտատեսական և գործնական նշանակությունը, բնութագրված են պաշտպանությանը ներկայացվող հիմնադրույթները:

Հետազոտության երեք գլուխներում ատենախոսը փորձել է հաջորդաբար լուծել ներածության մեջ առաջադրված խնդիրները: Առաջին գլխում միջգիտակարգային առնչությունների շրջանակներում բազմաոլորտային համակողմանի քննության հիման վրա մեկնաբանված է «ռեֆլեքսիա» հասկացությունը՝ իր կառուցվածքային և բովանդակային բաղադրիչների ինտեգրատիվ բնույթով և մարդակենտրոն առաջնահերթություններով: Ուշագրավ են ուսուցչի մասնագիտական ռեֆլեքսիայի ձևավորման մանկավարժական պայմանների, գործառույթների, ձևավորվածության մակարդակի չափանիշների մշակման, մեթոդատեխնոլոգիական ապահովման, ուսուցչի մանկավարժահոգեբանական պատրաստվածության, նրա՝ որպես մասնագետի, անհատի և քաղաքացու որակական բնութագրիչների, հաղորդակցման, հուզագայակային ու ճանաչողական ոլորտների վերաբերյալ մոտեցումների ու մոդելների բազմատեսանկյուն վերլուծությունները:

Ատենախոսության երկրորդ գլուխը ներառում է հետազոտության հիմնախնդրին առնչվող հիմնահարցերի բավականաչափ լայն շրջանակ: Մանկավարժական դիսկուրսի շրջանակներում ուսուցչի հաղորդակցական ռեֆլեքսիայի զարգացումը դիտարկված է ռեֆլեքսիվ միջավայրի, ուսուցչի ինքնաճանաչման, ինքնավերլուծության, ճանաչողական, դրդապատճառային, արժեքային, վարքագծային ոլորտների փոխկապվածության, սոցիալական և խոսքային վարքագծի, գործընկերային փոխներգործության, արժեքանական ընկալումների համատեքստում: Ռեֆլեքսիվ կոմպետենցիայի ձևավորման ու զարգացման հեղինակային մոդելների քննությունը բացահայտում է ուսուցչի հուզականային, դրդապատճառային-պահանջունքային ոլորտներին, նաև ուսուցաբանական, իրադրային գործոններին առնչվող հիմնադրույթներ: Այս առումով ատենախոսն ընդլայնում է հետազոտության հիմնախնդրի քննարկման ոլորտը՝ արծարծելով անձի ներըմբռնման, ինքնագնահատման, ինքնորոշման, քննական մտածողության զարգացման վերաբերյալ գոյաբանական հարցեր, որոնք առհասարակ կեցության հոլովություն մարդու գոյիմաստի փիլիսոփայական իմաստավորման հարցադրումներ են և սերտորեն առնչվում են

ռեֆլեքսիվ կոմպետենցիայի զարգացմանը: Արված վերլուծությունների հիման վրա ստենախոսն առաջարկում է ուսուցչի մասնագիտական ռեֆլեքսիվ կոմպետենցիայի ձևավորման և զարգացման քառաստիճան մոդել, որի արդյունավետության փորձարարական հիմնավորմանն էլ նվիրված է ստենախոսության երրորդ ենթագլուխը՝ որպես տեսական և գործնական հետազոտության վերլուծական-գնահատողական ամփոփում: Այս գլխում փորձ է արվել SWOT վերլուծությամբ բացահայտել հիմնախնդրին առնչվող մի շարք տեսանկյուններ: Հետաքրքիր է ռեֆլեքսիվ կոմպետենտության զարգացման որոշ հնարների կիրառման վերլուծությունը: Կարելի է հավաստել, որ ռեֆլեքսիվության մակարդակի որոշման հեղինակային մեթոդիկաների կիրառման փորձը, ախտորոշիչ գործիքակազմը կարող են օգտակար լինել ոչ միայն մանկավարժական ռեֆլեքսիայի, այլև սոցիալ-մշակութային տարբեր իրազեկությունների չափման և գնահատման գործընթացներում: Ներկայացված մոտեցումների, մոդելների, տեխնոլոգիաների, հնարների բնութագրումները կարող են մեթոդաբանական կարևոր ներդրում լինել նաև ապագա ուսուցիչների մասնագիտական պատրաստության գործընթացում:

Ստենախոսությունը տրամաբանական, կառուցվածքային առումով ավարտուն, ինքնուրույն, ամբողջական գիտական արդյունք է, հետազոտության թեման արդիական է, հիմնախնդրի ոլորտում արված է ծանրակշիռ հետազոտություն: Ընդհանուր առմամբ պահպանված են գիտահետազոտական աշխատանքի բովանդակային, կառուցվածքային, լեզվաոճական կողմին ներկայացվող պահանջները:

Նշված առավելությունների կողքին կարելի է առանձնացնել որոշ նկատառումներ.

1. Շահեկան կլիներ, որ ստենախոսության մեջ հստակ մատնանշվեին և բնութագրվեին ուսուցչի մասնագիտական ռեֆլեքսիվ հմտությունների զարգացման ուղիները, որը հետազոտության առարկան է:

2. Ստենախոսությունն էապես կշահեր, եթե հետազոտության գիտական նորույթը համարվող քառաստիճան մոդելի արդյունավետությունը ստուգելու համար համեմատության մեջ դրվեին գիտափորձի հաստատող և ձևավորող փուլերի ընթացքում ստացված տվյալները, որը կհավաստեր կիրառված մանկավարժական ներգործության արդյունավետության դինամիկական փորձարարական խմբում:

3. Ցանկալի կլիներ ուսուցչի մասնագիտական ռեֆլեքսիվ կոմպետենցիայի ձևավորման և զարգացման քառաստիճան մոդելի կառուցվածքում հստակ բնութագրված լինել ուսուցչի վերապատրաստման անձնակենտրոն-ֆասիլիտացիոն տեխնոլոգիան:

4. Ատենախոսության մեջ զուգահեռաբար գործածվել են «ռեֆլեքսիվ հմտություններ» և «ռեֆլեքսիվ կոմպետենցիաներ» հասկացությունները, մինչդեռ դրանք նույնական չեն: Հարկ էր հստակ տարրորոշել և միանշանակ գործածել հետազոտության համար առանցքային այդ հասկացությունը:

5. Մանկավարժական ռեֆլեքսիայի գործառույթների մասին խոսվում է առաջին գլխի թե՛ երկրորդ, թե՛ երրորդ ենթագլուխներում, ուստի ճիշտ կլիներ դրանք զետեղվելին մեկ ենթագլխում:

Արված նկատառումներն ընդհանուր առմամբ չեն ազդում հետազոտության արժեքի և այն գնահատականի վրա, որին իրավամբ արժանի է ատենախոսությունը:

Նարինե Ռաֆիկի Մատինյանի «Ուսուցչի մասնագիտական ռեֆլեքսիվ հմտությունների զարգացման ուղիները շարունակական կրթության համատեքստում» խորագրով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանավորման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և ԲՈԿ-ի կողմից ԺԳ. 00. 01. «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացվող պահանջներին, և հեղինակն արժանի է հայցած գիտական աստիճանին:


Պաշտոնական ընդդիմախոս՝
մանկ.գիտ. թեկնածու, դոցենտ՝



Գ. Հ. ՀԱԿՈՒԲՅԱՆ

Գ. Հ. Հակոբյանի ստորագրությունը հաստատում եմ՝

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի գիտքարտուղար,
մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ՝



Մ. Մ. ԻՍՊԻՐՅԱՆ

24. 06. 2022թ.